

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«13» մայիս 2021թ.

No 1769 - Լ

«ՎԱՆԱԶՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ», «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»,
«ԱՐՄԵՆԻԱ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ՆԵՐԻ, «ԻՌ-ՎԻՆԳ»,
«ՄԵԴԼԱՅՆ» ՍՊԸ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԻ
ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության
քնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին»
ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին կետը, Հայաստանի Հանրապետության
վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով
հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի
20-րդ ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել առողջապահության նախարարի 2021 թվականի մարտի
25-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդացությամբ
(COVID-19) պայմանավորված «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական
ընկերություննում կորոնավիրուսի հիվանդության (COVID-19) ախտորոշումը
հաստատված պացիենտների բժշկական օգնության և սպասարկման ծառայություն
ծավալելու վերաբերյալ» թիվ 968-Լ հրամանը:
2. Ուժը կորցրած ճանաչել առողջապահության նախարարի 2021 թվականի մարտի
25-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդացությամբ
(COVID-19) պայմանավորված «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ
բաժնետիրական ընկերություննում կորոնավիրուսի հիվանդության (COVID-19)
ախտորոշումը հաստատված պացիենտների բժշկական օգնության և սպասարկման
ծառայություն ծավալելու վերաբերյալ» թիվ 970-Լ հրամանը:

3. «Վանաձորի բժշկական կենտրոն», «Գյումրու բժշկական կենտրոն», «Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների, «Իռ-Վինգ», «Մեդլայն» ՍՊԸ-ների (այսուհետ՝ Կազմակերպություններ) տնօրեններին՝

1) 2021 թվականի մայիսի 17-ից դադարեցնել Կազմակերպությունների կողմից իրականացվող կորոնավիրուսի հիվանդության (COVID-19) ախտորոշումը հաստատված և ախտորոշման ճշտման անհրաժեշտություն ունեցող պացիենտների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները,

2) կորոնավիրուսի հիվանդությամբ (COVID-19) հիվանդանոցային բուժօգնություն ստացող պացիենտներին առողջական վիճակի գնահատումից հետո դուրս գրել՝ հետագա հսկողությունը կազմակերպելով տեղամասային պոլիկլինիկաներում կամ տնային պայմաններում: Այն պացիենտները, ովքեր ունեն հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտություն, կազմակերպել նրանց տեղափոխումը համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող այլ բժշկական կազմակերպություններ,

3) սահմանված կարգով կազմակերպել նոր կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված սանիտարահամաճարակային անվտանգության միջոցառումներ,

4) 2021 թվականի մայիսի 17-ից սկսած կազմակերպել պացիենտների բժշկական օգնությունն ու սպասարկումը սահմանված կարգով ընդհանուր հիմունքներով:

4. Առողջապահության նախարարության «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն Արտավազդ Վանյանին՝

աջակցել Կազմակերպության տնօրինությանը և համաճարակաբանական ծառայությանը նոր կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված սանիտարահամաճարակային անվտանգության միջոցառումների և ներհիվանդանոցային վարակի տարածման կանխարգելման աշխատանքների կազմակերպման գործընթացում:

5. Առողջապահության նախարարի խորհրդական Յակով Ասատրյանին՝

սահմանված կարգով կազմակերպել Կազմակերպության կողմից մինչև ս.թ. մայիսի 17-ն ավարտված դեպքերի փոխհատուցումը:

6. Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ Ծաղիկ Վարդանյանին՝

1) սահմանված կարգով կազմակերպել առողջապահության նախարարության և Կազմակերպությունների միջև վերապրոֆիլավորված բժշկական ծառայությունների մասով բժշկական օգնության և սպասարկման ու այլ ծառայությունների մատուցման պայմանագրերի՝ «Պայմանագիր ԱՆ 018», «Պայմանագիր ԱՆ 011», լուծման գործընթացը:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Գևորգ Սիմոնյանին:

8. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյան՝

հրամանը տեղադրել առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

9. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ